



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 25 ՄԱՐՏ, 2013

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՐՍՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ՛ ինձի, ճ՛վ Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես. քո անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի: Ամբողջութեամբ մաքրէ՛ զիս իմ անօրէնութենէս, եւ իմ մեղքէս զիս սրբէ՛: Ուստի ներումիդ ցօղով սրբէ՛ զիս, եւ պիտի մաքրուիմ, լուա՛ զիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ: Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ճ՛վ Աստուած, նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս: Ներկայութենէդ մի՛ գրկեր զիս, Տէր, եւ քո Սուրբ Հոգիդ թող չլքէ զիս: Փրկութեանդ ցնծութիւնը տուր ինձի, եւ քո կամփիղ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս: Բաց իմ շրթներս, ճ՛վ Տէր, թող բերանս բեզի օրհնութիւն երգէ: Եթէ գոհ կամենայիր՝ պիտի մատուցանէի, բայց ողջակէզ դուն չես ուզեր: Ուզած գոհդ գղջումով լի հոգի մըն է, ո՛վ Աստուած, հետեւաբար մի՛ մերժեր գղջումնալից եւ ընկնուած իմ սիրտս:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

### ԱՊՈԹՔ

Որդի Աստուծոյ, Աստուած նշմարիտ,  
որ խոնարհեցար հայրական ծոցէն  
եւ մեր փրկութեան համար մարմին առիր Սուրբ Կոյս Մարիամէն,  
խաչուեցար ու թաղուեցար եւ մեռելներէն յարութիւն առիր  
եւ բարձրացար Հօրդ քով,  
մեղանչեցի երկինքի դէմ եւ քո առջեւդ,  
զիս ալ յիշէ, ինչպէս աւազակը, երբ քո արքայութեամբդ գաս.  
ողորմէ՛ քո արարածներուդ եւ ինձի մեղաւորիս: Ամէն:



**Կնոջ դափապարտությունը**

«Քու յղութանդ ցաւերը խիստ պիտի շարքնեն: Ցաւով զաւակ ծնանիս ու էրկանդ հնազանդ ըլլաս ու անիկա քու վրայդ իշխէ»:

Այնպէս կը թուի թէ նախապէս կինը առանց ցաւի զաւակ կը ծնանէր: Որքան ալ ըլլան այդ ցաւի որակը, այսպէս կարելի է հասկնալ որպէս բազմապարկումը եղած ցաւին: Այդ ցաւը կարելի է հասկնալ երկու ձեւով. ֆիզիքական եւ հոգեկան: Ֆիզիքական իմաստով, զաւակի մը ծնունդը որքան ալ ցաւալի է, բայց նաեւ ուրախութեան պարճառ ու առիթ է: Միւս կողմէ, սակայն կայ նաեւ հոգեկան ցաւը, որ երբ մայրը կը փեսնէ իր որդիին շեղումը, անկումը: Երրորդ դափապարտութիւնը, մարդուն հնազանդիլ: Նախապէս Աստուած կինը հաւասար սրբեղծեց, բայց հիմա ենթակայ կը դառնայ մարդուն: Այս երեւոյթը կարելի է հասկնալ երկու իմաստով: Նախ, այս երեւոյթը կայ եւ կը շարունակուի մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը, բայց նաեւ կարելի է հասկնալ մինչեւ Քրիստոս, երբ Քրիստոսով այդ խտրութիւնը վերջ կը գտնէ (Գաղթ 3:28):

**Մարդուն դափապարտութիւնը**

«Որովհետեւ քու կնոջդ խօսքը մտիկ ըրիր եւ այն ծառէն կերար, որուն համար պապութեցի որ ջուրես, երկիրը քու պարճառաւ անիծեալ ըլլայ»:

«Կեանքիդ բոլոր օրերուն մէջ նեղութիւնով ուրես անկէ»:

«Փուշ ու փարասկ բուսցնէ քեզի եւ դաշտին խտրը ուրես»:

«Երեսիդ քրտինքովը ուրես քու հացդ»: «Հող էիր եւ հողին պիտի դառնաս»:

«Աղամ իր կնոջ անունը Եւա դրաւ, որ կը նշանակէ կեանք»:

Մարդուն դափապարտութիւնը, որ կը ներկայացնէ երեք կէտեր: Աստուած մարդուն չանիծեր, այլ Աստուծոյ անէծքը կ'ուղղուի երկրին, եւ այս ցոյց կու տայ Աստուծոյ գթառապարտութիւնն ու ողորմածութիւնը մարդուն հանդէպ: Սակայն մարդուն կեանքի պայմանները կը դժուարանան: Նախապէս երկրի դրախտային վիճակը դիւրին կերպով ամէ ինչ կ'ընծայէր մարդուն եւ անոր նուազագոյն աշխատանքին դիմաց առաք բերքը կու տար, իսկ մեղանչումէն յետոյ, երկիրը կարծէք իր դռները կը գոցէ, եւ բազմաթիւ աշխատանքի փոխարէն շարքի բերք է որ կ'ընծայէ, սա ցոյց կու տայ ճակարհի քրտինքովդ հացդ վաստակելու իմաստը: Միւս կողմէ կայ բնութեան աղէտը: Եւ ահա մարդուն հետ միասին բնութիւնն ալ կը կրէ այդ դափապարտութեան վիճակը: Հետեւաբար, ինչպէս մարդը փրկութեան կարիքը ունի, նոյնպէս բնութիւնը փրկութեան կարիքը ունի:

Այս բոլորին դիմաց, Աստուած կրնար մարդը փրկել, բայց ուզեց, որ մարդը իր փրկութեան համար աշխատի, իր կամքը զօրացնէ եւ մերժէ չարին ազդեցութիւնները Աստուծոյ հետ ըլլալու համար: Մերժելու համար մարդը պէտք է զօրանայ հոգեւորապէս: Միւս կողմէ, Աստուած նաեւ կրնայ չարը միանգամընդիշտ մէջտեղէն վերցնել, բայց ուզեց որ փկար եւ հողեղէն սրբեղծուած մարդը ինք յաղթէ չարին, եւ ուզեց այդ յաղթանակի ճամբան ցոյց տալ, որ երկար ճամբայ է, հազարաւոր տարիներ տեւող: Ինչո՞ւ: Որովհետեւ մարդ արարածը ինք դանդաղ է ստրվելու եւ Աստուծոյ պապութիւնները պահելու գործին մէջ: Այս բոլորով հանդերձ, սակայն, Աստուած խոստացած է տալու մարդուն զօրութիւնը այդ յաղթանակը տանելու համար: Աստուած փրկութեան այս կերպը որդեգրեց, որպէսզի յայտնէ Իր արդարութիւնը եւ արդար դափաստանը չարին դէմ:

Աստուած Ադամին ու անոր կնոջ կաշիէ հանդերձներ շինեց ու անոնց հագցուց:

**ԱՂԱՄՆ ՈՒ ԵԲԱՆ ԴՐԱԽՏԷՆ ԿԸ ՎՈՒՏՈՒԻՆ (22-24)**

«Ահա Ադամ մեզմէ մէկուն պէս եղաւ՝ բարին ու չարը գիտնալով»:

«Պիտի ջնուպարեն որ ձեռքը երկնցնէ ու կենաց խառնէ ալ առնէ եւ ուրիշ ու յախտեան ապրի»:

«Աստուած դուրս դրաւ, որպէսզի երկիրը մշակէ, ուրիշ առնուեցաւ»:

«Քերովբէներ ու ամէն կողմ դարձող բոցեղէն սուրը դրաւ, կենաց ծառին ճամբան պահելու համար»:

Ինչ է Աստուծոյ մրահոգութիւնը: Մարդուն տրուած էր անմահանալու կարելոյթիւնը: Հակառակ որ մարդը մահկանացու սրբեղծուած էր, սակայն, մահուան ենթարկուած չէր այնքան արեւն որ կը մնար Աստուծոյ հնազանդութեան մէջ: Հիմա մահուան ենթարկուեցաւ իսկ մեղքը մուտք գործեց մարդուն մրածական կեանքի մէջ: Այս վիճակը որպէսզի մնայուն չըլլայ, Աստուած կ'արգիլէ, որ մարդը ճաշակէր կենաց ծառէն ալ: Աւարտին, սակայն, այդ Կենաց Ծառը պիտի ըլլար նոյնինքն Քրիստոսը, որուն ճաշակումը պիտի տայ յաւիտենական կեանքը: Բայց նախ մաքրուիլ մեղքէն: